ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ----- 2025 թվականի №-Ա

«ՀՈՎՍԵՓՅԱՆ 90 ՇԻՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2025 թվականի փետրվարի 20-ի №04/11.1/1400-2025 գրությամբ ներկայացված տեղեկատվությունն առ այն, որ էլեկտրամագնիսական իրավիճակների հետազոտումների արդյունքում Կոտայքի մարզի Զովունի համայնքի 30-րդ փողոցի 2-րդ նրբանցք հասցեում գտնվող շինհրապարակում, որտեղ գործունեություն է իրականացնում «ՀՈՎՍԵՓՅԱՆ 90 ՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն), հայտնաբերվել են առանց թույլտվության 462,075ՄՀց ռադիոհաճախականությամբ շահագործվող ռադիոկայաններ,

բ) առանց թույլտվության ռադիոհաճախականության օգտագործումը դադարեցնելու վերաբերյալ Ընկերությանն ուղղված Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2025 թվականի մարտի 20-ի №ՍԾ/34.2-Մ2-9/1194-2025 գրությունը, որին ի պատասխան՝ Ընկերությունը հայտնել է, որ ռադիոկայանների օգտագործումը վերջինիս կողմից դադարեցվել է,

գ) որ իրավասու պետական մարմնի ներկայացրած տեղեկատվությամբ և Ընկերության գրությամբ փաստվել է վերջինիս կողմից առանց թույլտվության 462,075ՄՀց ռադիոհաճախականության օգտագործումը, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ժդ» ենթակետը, 3-րդ կետի «ե» ենթակետը, 60-րդ հոդվածը և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է**.

1. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից դադարեցնել առանց թույլտվության 462,075ՄՀց ռադիոհաճախականության օգտագործումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
-- ---------2025թ.